արժէք արասցեն զգլխաւորին Խորասանու և Իրագու և Ադերպէյճանի, զի քանի մի անգամ արժէ ,, ։

Թող կարդացողք և աս բանս չգիտցող Եւրոպացիք ալ դատեն, և ով որչափ նմանութիւն գտնէ աս անգլին զմրուխտին և Տիգրանայ Թագին ու հարստութեանը հետ՝ այնչափ աւելի համարմունք ունենայ անոր վրայ ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Տղոց ճճիներուն դեղ ։

ՇԱՏ անգամ տղոց վրայ այլ և այլ հիւանդութիւններ կուգան, որ չհասկցողը կարծէ թէ անոնց պատճառը ճճիներն են, որ անանկ չէ. վասն զի ճճիները չեն կրնար ուրիշ նոր հիւանդութիւն պատճառել, հապա իրենք միայն խեղճ տղան կը չարչարեն, և երբեմն ինչուան մահուան դուռը կը հասցընեն ։

Տղու մը ճճի ունենալուն գլխաւոր նշանները սովորաբար ասոնք են. աչուըներուն բիբերը կ՚ընդարձակին, շունչը կը հոտի, ստէպ կը ձգուտայ, ստամոքսը կը ցաւի և խոստուկ կ՚ունենայ. քանի որ պզտիկ է ու խօսելու կարողութիւն չունի՝ տքալով ու ձեռքը ասդին անդին ցաւած տեղուանքը տանելով կը ջանայ հասկցընել քաշած նեղութիւնը. չոր հազ մը կ՚ունենայ, քընանալու ատեն ակռաները կը կրճտէ, երեսը կը դեղնի, մարմինը կը վատուժնայ, ընչերակը անկանոն կերպով կը զարնէ, վրան երբեմն տաքութիւն կուգայ՝ երբեմն պաղութիւն, շատ անգամ ալ կը դողդըղայ ։

Իսկ ան հիւանդութիւնները որ բըժըշկութենէ չհասկցող մարդիկ ճճիներէ առաջ եկած կը սեպեն, ասոնք են. դժուարաւ ակռայ հանել, մարմնոյն վրայ ծաղկի պէս մանր բաներ դուրս տալ, փորու ցաւ, ջղային ջերմ և այլն ։ Այսպիսի հիւանդութեանց դէմ մը առնելու համար՝ ճճիի դեղ տալը ոչ միայն անօգուտ է, հապա նաև մեծ վնաս կրնայ ընել ։

Որպէս զի տղոց փորուն մէջ ճճի չըգոյանայ, ամէն բանէ առաջ պէտք է զգուշանալ անոնց այնպիսի կերակուրներ տալէն՝ որ ճճի գոյացընելու պատճառ կ՚ըլլան ։ Ան տղաքը որոնց կազմուածքը տկար է, մարմիննին ճերմակ, փորերնին սաստիկ ուռած, երբոր անյագ կերակուր կ՚ուտեն, և դժուար կը մարսեն, խիստ ենթակայ կ՚ըլլան ճճի ունենալու ։ Նմանապէս քանի որ տղան պզտիկ է, և դեռ ակռայ չունի, պէտք չէ իրեն միս կամ դժուարամարս կերակուրներ կերցընել. տեսակ տեսակ համեմները, նստողական կեանքը, քիչ շարժմունք ընելը, և ասոնց նման բաներ տղուն ճճի ունենալուն մեծ պատճառ կ՚ըլլան ։ Ուստի գէշ կ՚ընեն ան ծնողք որ իրենց տղոցը վրայ չափէն աւելի գուրգուրալով՝ կ՚ուզեն որ ամէն բան կերցընեն անոնց, և կամ անոնց ամէն ուզածին մտիկ ընելով այնպիսի բաներ կուտան ուտելու որ տղոց առողջութեանը մեծ վնաս է ։

Սովորաբար կը կարծուի թէ շաքարեղէնները և ուրիշ անուշ կերակուրները ճճի կը գոյացընեն. բայց պէտք է լաւ զանազանել ։ Բէտի անունով անուանի բժիշկը փորձեր տեսեր է որ տղոց շաքարի ջուր խմցուցեր է, և ճճիները մէկէն սատկեր են. և ուրիշներն ալ փորձած են որ եփած շաքարը տղոց ամենևին վնաս չըներ ։ Իսկ քաղցրաւենին կամ շաքարոտած պտղեղէնները, և ուրիշ մը և իւղէ անուշ կերակուրներ, որ մարդուս ջիղերը կը թուլցընեն՝ մարսողութիւնը կ՚այլայլեն, անոնք շատ ճճի կը գոյացընեն ։

Ուրեմն երբոր ծնողք կ՚ուզեն իրենց տղաքը աս հիւանդութենէն ազատ պահել, պէտք է

Ա. Զգուշանան անոնց արհեստական համեմներ կերցընելէն. հապա միայն պարզ ու դիւրամարս կերակուրներ տան ։

Բ. Որչափ կարելի է անոնց մարմնոյն կազմուածքը զօրացընեն զով տեղուանք տանելով, կամ շարժմունք ընել տալով։

Գ. Երբոր տղաք քիչ ախորժ ունենան կերակուր ուտելու, քիչ կերակուր տրուի իրենց։

Դ. Երբոր տղաք չոր հազ մը ունենան, և ՃՃիի նշաններ ցուցընեն, մէկ երկու պղտի դրգալ ձէթ խմցընելու է շաքարով խառնած. անով մէկէն կը փարատի։

Ե. Երբոր յայտնի կ'իմացուի թէ տղան ՃՃի ունի, ալ անկէ ետքը պէտք չէ մարդ ինքիր գլխուն դեղեր ընէ. հապա բժիշկ կանչելու է։

Ամ զգուշութիւններով մեծ հիւանդութեանց առջևը կ'առնուի, և թեթև հիւանդութիւնները կ'անցնին։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նայա կամ Էնոցաուոր օձ։

ՆԱՆԱՊԱՐՀՈՐԴՔ այս օձին ակնոցաւոր ըսին՝ վզին վրայ ակնոցի ձևով գծուածք մը ունենալուն համար. ու Քորոմանտէլի երկրին մէջ կը գտնուի, և իր գլխաւոր յատկութիւններովը ուրիշ օձերէն տարբեր ցեղ կը սեպուի, վասն զի վերի ծնօտին ոսկորներուն վրայ սրածայր թիւնալից ակռաներ ունի, որոնք հանդարտ կեցած ատենը՝ կրկնածալ ընտերքին մէջ կ'առնէ կը ծածկէ. ծնօտը սաստիկ տեղիք կուտայ ու կը լայնայ, լեզուն խիստ կ'երկրննայ, գլխուն ետևի կողմը լայն է ու թիթեղի պէս հաստ ու պինտ թեփով ծածկած. պոչն ալ կլոր է ու վրան նոյնպէս երկու կարգ հաստ թեփ կայ. ակռաները կարճ,

1 Լատ. Naja tripudians. Գղ. Serpent à lunette. Անգղ. Spectacle snaike. Իսկ Հնդկաստանցի Փորթուգէզները Cobra de capello կ'ըսեն և տեղացի Հնդիկները նակ և էնրնանոյ։